

չունէր, մանաւանդ այս դժուարամատոյց հովիտներուն մէջ այնպիսի սաստկու թեամբ գործելու։ Այսու հանդերձ երբեք չին պակսած հոս ալ, նախ յիշիալ Տէր Կարապետի տնէն մինչեւ 1820, եւ յետոյ նաեւ 1840է ետքը առանձնական ուրիշ հայ քահանայք, որոնք ծպտեալ կ'երթային Սեւ-Գետ ու Համշին. եւ եղած են «բէկներ» այս գաւառաց կիսանկախութեան շրջանին, որոնք ղիւրութիւններ կ'ընծայէին։ Համիտեան հալածանաց օրերէ ի վեր իրերն աւելի դժուարացած են. իսկ թուրքերը ջանացին վերջերս դպրոցներ բանալով մէկ երկու զխաւոր տեղեր՝ հայ մահմետականները նաեւ թուրքացընել։ Ասոր աշխատած են ի մասնաւորի նաեւ Օֆի մեծ ու փոքր «մօլաները», որ փոքր քաղաքի բնակիչք թէեւ յունախօս մնացած են եւ ծեքածուռ թուրքերէն մը միայն դիտին խօսիլ, շատ մոլեռանդ են, եւ իբր «մօլա» եւ իբր շրջուն քարոզիչներ՝ ջանացած են Պոնտական լեռնաշղթայի ամէն կողմը վերջնականապէս իսլամացընել եւ այն մահմետականացածները՝ որչափ կրնան՝ մոլեռանդ բնել։

Հայ լեզուի դէմ մաքառած են ար-